ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ 2026թ. հունվարի 14 -ին, N 10 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՇՏԱՐԱԿԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի, ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը և չափորոշիչները սահմանելու մասին» N 539-Ն որոշումը՝ ***հրամայում եմ***.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի՝ «Աշտարակի մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար՝ 2026 թվականի փետրվարի 17-ին ժամը 11 ^{00}-ին անցկացնել մրցույթ:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
3.Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության, հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կաառավարման բաժնին՝
ապահովել վերը նշված հայտարարության հրապարակումը Հայաստանի Հանրապետության մարզպետի աշխատակազմի կայք էջում, azdarar.am-ում և կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնական ինտերնետային կայք էջում:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 1/15/2026 11:35:07 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ